

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՆԿՐԱԿԱՐՁԸ ՄԵԼՔՈՆ ԿՅՈՒՐՃՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ա. Մ. ՉՈՒԽԱՐՅԱՆ

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ գրական-հասարակական շրջաններում հայտնի, սակայն մինչև մեր օրերը գրեթե շուտումնասիրված հեղինակներից է Մելքոն Կյուրճյանը (Հրանգ):

Մի քանի տասնյակի հասնող իր պատմվածքները Հրանգը դասդասում է ուշագրավ խմբավորումներով, վերնագրելով՝ «Փողոցնե ժողովուրդ», «Խոնարհ խավերու մեջ», «Գաղթականութիան ցավերն», «Վաւարանիս քով», «Կաթնտուներու կյանքն», «Մանկութիան հիշատակներ», «Կես-շինական նամականի» և այլն: Ինչպես արդեն ենթադրվում է խորագրերից, Կյուրճյանն իր ուշագրութիւնը կենտրոնացնում է «խոնարհ խավերու» մարդկանց ցավ ու հոգսերին, մարդկային տառապանքի բազմաբնույթ դրսևորումներին: Սոցիալական ուղղվածութիւնը դառնում է նրա ստեղծագործութիւնի յուրահատկութիւններից մեկը: Պատմվածքներում Հրանգը պատկերում է նաև պանդխտութիւնի ողբերգական հետևանքները: Այդ թեմայով գրված նրա ստեղծագործութիւնները ինչպես թեմատիկայով, այնպես էլ ժանրային առանձնահատկութիւններով սերտորեն առնչվում են նախորդ տարիներին լույս տեսած քրոնիկների հետ: Տարբերութիւնը թերևս այն է միայն, որ սրանք շունչն վերջիններիս անմիջական ոճը, բայց ունեն նորավեպի ժանրին առավել մոտեցող պատումի եղանակը և սյուժետային կոնկրետ կառույցը:

Հրանգը թանձր գույներով է պատկերում այն դաժան իրականութիւնը, որը պարտադրում է պանդուխտի ցնցոտիներ հագնել նույնիսկ հայ կնոջը: Շուշանը Մուշից գալիս է Պոլիս և տըղամարդու հագուստի ու անվան տակ ծպտված՝ ֆիզիկական ծանր աշխատանք է կատարում («Ժպիտ կերպարանք»): «Ի՞նչ անեմ, — սուտ է նա, — մեր տանը մեջ էլ կարիպութիւն մարդ չի մնաց, քուլֆաթ ունիմ, քուրբեր, պստիկ աղբրտանք, զմենն էլ հացի կարտու: Ով պիտի կերակրե ինոնց»: Գավառացի օրիորդը քանի դեռ աշխատանք ունի, իր վիճակի համար չի նեղվում: Շուշան-Ակորի դրութիւնն իրոք անմխիթար է դառնում այն ժամանակ, երբ բացահայտվում է նրա կին լինելը, ու առաջվա պես տղամարդկանց հետ աշխատելը, նստել-վեր կենալը դառնում է անհնար:

Կյանքի, ապրուստի համար մղվող գոյակովում նույնքան թշվառ է 1895 թ. Ա. Զուպանյանի «Սաղիկ» հանգեսում լուս տեսած «Բեղնած թուղթեր» շարքում պատկերված պանդուխտ ստնտունների վիճակը: Ողբերգական է ուրիշի երեխաներին իրենց կաթով կերակրող ծննդկանների կյանքը: Այդ կանայք ծանր պայմանների թելադրանքով թողնում են տունն ու նորածին զավակներին՝ Պոլսում դրամ աշխատելու հույսով: Ո՞ր ստնտուի պատմութիւնն էլ թերթում է հեղինակը, տեսնում է, որ այն շաղախված է միայն արցունքով ու լացով: Մի դեպքում հուզմունքից ու բաժանման կսկիծից սպառվում են կաթի պաշարները, և հուսահատ կինը մնում է անզամ առանց վերադարձի ճանապարհահատիսի: Մյուս դեպքում զավառից գալիս հասնում է մայրական կաթից ու խնամքից զրկված մանկիկի մահվան լուրը: Հեղինակին այնպես է թվում, թե ամեն կաթնտուի ոտքին տակ ջուխսխուտ կյանք մը կա, և քաղքենի փոքրիկները, որոնք գեղջուկին կուրծքն կախ անոր ստինքը կը քամեն, մեյմեկ ոճրագործներ են, հազով երերուն, արյունոտ թաթիկներով, արյունոտ շրթունքներով: Այո՞, պզտիկ ոճրագործներ՞:

«Բեղնած թուղթեր» շարքում արտակարգ հուզիչ է կամավոր զոհողութիւնը որդուն ուրիշների նվիրող մոր կյանքի պատմութիւնը: Ծրտահարութիւնների ժամանակ ամուսնուն կորցրած կինը ստիպված է միայնակ հոգալ դստեր և նորածին որդու ապրուստը: Ուրիշի երեխային կերակրելու ընթացքում դա նրան ինչ-որ կերպ հաջողվում է: Բայց ի՞նչ է անելու նա,

¹ Մ. Կյուրճյան, Ամբողջական երկեր, Փարիզ, 1931, էջ 169:

² «Սաղիկ», Կ. Պոլիս, 1895, էջ 200:

երբ հարուստ ծնողների հետ կնքած պայմանագրի ժամկետը վերջանաւ: Չէ՞ որ սպասավորութիւն անելու ղեկըրում իսկ վաստակած շնչին գումարը, իր գավակներին պետք եկած ծախսերի հետ համեմատելով, «ակոռայի դեղ անգամ չէր ըլլար»: Մոտ սպագայում սպասվող այս փաստի կանխատեսումից զրոյված՝ սիրագործով մայրը համաձայնում է իր փոքրիկին որդեգիր տալ՝ հետագա ողջ կյանքում չփոխելու հանձնառութիւնով: «Թող երթա գավակս, — ասում է նա, — ողջ մնա, մարդ ըլլա, ու երջանիկ ապրի: Ես այնպես կը սեպեմ. որ այսօրվընէ մեռած եմ»:

«Ինչնած թուղթերում» նկարագրող դեպքերը, բոլոր հերոսների խոհերն ու զգացումները հնում են միանգամայն համոզիչ, անբռնադրոս ու բնական: Դրանք դաջվում են ընթերցողի մտապատկերներում՝ թողնելով հավաստութիւն լիարժեք պատրանք: Հակոբ Օշականն այս շարքը բնութագրելիս նշում է, որ դրանում ընդգրկված պատմվածքները «հարազատութիւնը գեթ անգերազանցելի էր Մաղիկի մէջ փորձված ստեղծագործական բոլոր կտորներին»³: Հրանդին հաջողվում է կեռտել «կլանքի իրական պատկերներ» շնորհիվ խոսքի բնական, հուզական շեշտելի և անմիջականութիւն:

Կնոջ սոցիալական անպաշտպանութիւն խնդրին Հրանդն անդրադառնում է նաև հետագայում: «Կլանքի մը քայքայումը» վերնագրով պատմվածքում նա պատկերում է արդեն իր վերջին օրերն ապրող ծեր կնոջ կլանքի անցած ճանապարհը, որի հատվածներն ըստ էութիւն միմյանցից գրեթէ չեն տարբերվում: 70-ամյա Մարիամը սկզբում գրազվել է ստնտվութիւնով, ապա աշխատել է որպես սպասուհի, իսկ երբ տարիքն արդեն զգացնել է տվել, դարձել է միջնորդ: Երջանագծի կենտրոնում մնում է միշտ մի փոքր հացի համար պայքարող կինը, որը, սակայն, ոչ մի բոսի չի ընկրկում աղքատութիւն ուրվականի առջև և վաճառքի չի հանում իր պատիվը, խղճի ու հոգու մաքրութիւնը: «Աղքատ կ'ապրիմ, գտածս կ'ուտեմ, մտաւորներուն բերին հոգու չեմ քաշեր»⁴. — ասում է նա: Մարիամը լավատես է, համառ, վաղվա նկատմամբ ունի հավատ և հույսով է, թէ շուտով ամեն ինչ դեպի լավն է փոխվելու: Մինչդեռ ի՞նչ է իրականում սպասվում նրան: «Իր ճակատագրին լուծումը գուշակել դժվար չէ, — գրում է հեղինակը, — այս ձմեռ քանի մը օր իր դուռը փակ պիտի մնա հավանաբար, դրացիին մեկը պիտի հետաքրքրվի անով, քանի մը հոգի մեկ տեղ գան թերևս, դժնակը հրելով՝ ներս մտնեն, ու հոն, գետնի վրա, հնոտիներու տակ սառած գտնեն պառավը»⁵:

Կանանց տխուր կենցաղից վերցված այս պատմութիւնները մարդկային դրամայի յուրահատուկ արտահայտութիւններ են: Ներքին կապերով շղթայվելով իրար՝ դրանք ներկայացնում են մի ամբողջ աշխարհի սոցիալ-հոգեբանական ողբերգութիւնը: Հրանդը հերթով բացում է թույլ ու անօգնական, աղքատութիւն ճիշտներով սեղմված տարբեր թշուառ կյանքի էջերը և դրանց վրա է դրավորում հանրութիւն ուշադրութիւնը: Նա նորովի է բացահայտում ստորին խավերին պատկանող մարդկանց հոգեկան բարձր արժանիքները: Հրանդն այս պատմվածքների գաղափարական հիմքն է դարձնում անհատի դատապարտվածութիւնը, որ գալիս է սոցիալական անապահով վիճակից ու քաղաքական անբարենպաստ մթնոլորտից, անհատի բարոյական բարձր նկարագրի ու միջավայրի հակադրումից: Մի քանի բնորոշ գծերով գրողն ստեղծում է կենդանի ու ամբողջական, միանգամայն կոնկրետ ու տեսանելի կերպարներ:

Սոցիալական շարիքը մերկացնող ու պախարակող Հրանդի ստեղծագործութիւններում հետաքրքրական է նկատել, որ հեղինակն այն դիտում է որպես ընդհանրական երևույթ: Այսինքն՝ նա գտնում է, որ պոլսեցի հասարակ աշխատավորի կլանքի պայմաններն ավելի բարվոք չեն պանդուխտ գավառացու կլանքի պայմաններից: Նմանատիպ պատմվածքներում, ուր գրողը հարազատ է մնում իր դավանած ռեալիստական գրական սկզբունքներին, նշմարվում են շատ ընդհանրութիւններ Երուսաղիմ, Կամսարականի, Բաշալյանի, Արփիարյանի պատմվածքների ու նորավեպերի հետ: Եթէ քրոնիկներում Հրանդի համար կատարյալ մարդը միայն գավառացին է, պատմվածքներում նա առավել լայն հայացքով է մոտենում և որպես դրական հատկանիշներ կրող է դիտում ընդհանրապես աշխատավոր մարդուն:

1890-ական թթ. էրզրումի կոտորածից և դրան հաջորդող իրադարձութիւններից հետո երիտասարդ մտավորականութիւնը խորհում է ազգապահպանման ներքին լծակներն ուժեղացնելու նոր եղանակների մասին: Պատմութիւնն դառը փորձին հետեւելով՝ շեշտը դրվում է նաև կրոնի ու հավատի պահպանման և ամբապնդման խնդրի վրա:

Առաջ քաշելով ազգային կրոնն ու հավատք ամուր և հաստատուն պահելու հարցը՝ երի-

³ Նույն տեղում, էջ 206:

⁴ Զ. Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականութիւն», հ. 5, Երուսաղիմ, 1952, էջ 206:

⁵ «Հայրենիք», 4. Պոլիս, 1893, թիվ 663:

⁶ Նույն տեղում:

տասարդ սերունդը դրան է խաչաձևում նաև ազգային ակունքներին մոտ կանգնելու խնդիրը (պաուպապերից ծառանգած հայրենի հող, ավանդույթներ, ավանդություններ և այլն)։ Պաշտպանելով այդ դիրքորոշումը՝ Հրանդը 1892—93 թթ. «Մասիսում» հրատարակում է «Մանկության հիշատակներ» պատմվածաշարը։ Եարքում ընդգրկված պատկերները հուշային վերապրումներ են, որոնք վերարտադրում են հայրենի եզերքի իրական տեսիլքը։ 20—30 տարի Պուսում անցկացրած հեղինակը չի մոռանում հայրենի գյուղը, չի կտրվում իր էությունը սկզբնավորող ու ձևավորող բնական ակունքներից, պապերի ու նախապապերի մասին ունեցած հիշողություններից։ «Ինչ որ մտածեմ, խոսիմ, գրեմ, պիտի արձակի գեղին այդ բարկ ու շիտակ հոտը», — իրավացիորեն գրում է նրա մասին Հակոբ Օշականը։

Եարքի «Կազանդի հիշատակներ», «Ծն ու պապիկ», «Մեր տան ուխտը», «Մեր հավատքը» և մյուս պատմվածքներում մտովի տեղափոխվելով հայրենի ափեր՝ հեղինակը հիշում է, թե որքան ամուր էր պապերի հավատը, որքան պարզ ու զեղեցիկ էր նրանց ավանդապահությունը, և որքան անկեղծ էին նրանց փոխհարաբերությունները։

Պարզ ու անբիծ գեղջկական հավատը հոգեբանական նուրբ վերլուծությամբ է ներկայացվում հատկապես «Մեր գերեզմանատունը» վերհուշում։ Այստեղ հեղինակի մտապատկերներում վերականգնվում են այն տեսարանները, երբ գյուղի ծերերը յուրաքանչյուր շաբաթ հավաքվում են գերեզմանոցում գտնվող Գարբիել խաչ կոչվող մատուռի մոտ։ Հափշտակությամբ անշշուկ աղոթքներ մրմնջալուց հետո նրանք նույնքան անշշուկ հեռանում են՝ «գոհացուցած աստվածություն մը որ, ինչչափ կարելի էր դատել, շատ բազմապահանջ չէր երևեր, և առանց քահանայի, վարդապետի ու անվանի եպիսկոպոսի միջնորդության կը լսեր զիրենք...»⁸։ Ի տարբերություն քաղաքային գերեզմանոցների, գյուղականը սարսափ ու երկյուղ չի ներշնչում։ Անպաճույճ, երկաթե վանդակապատերից ու թանկարժեք դամբանաքարերից զերծ հողակույտերը կորցրած մտերմների կենդանի հիշողության մարմնացումն են միայն։

Հեղինակը բարանում է, որ իր պապը բերանացի դիտի իրենց բոլոր հարազատների շիրմերը (Թեև քարերի վրա անուն ու ամսաթվեր չեն գրված) ու թոռներին էլ պատգամում է դրանք պահպանել անկորուստ։ Զգալով իր մոտալուտ մահը՝ «հելլեն իմաստունի մը բարոյական առաքինությամբը» նա քահանային խնդրում է օրհնել նաև իր քարը. «է՛հ, ի՞նչ գիտես. բարիք մը կը ծնի և գալ տարի իս ալ կ'օրհնես քարիս տակ»⁹։ Նա խնդրում է ճակատագրին այնպես անել, որ ինքն ու «հորենական տունն ցիրուցան» մյուս բոլոր կյանքերը գոնե իրենց հավիտենական հանգիստը գտնեն Գարբիել խաչի պատապարտության ներքո՝ իրենց պապերի գերեզմանների շուրջը ամփոփված։ Վերադարձ դեպի հայրենի հողն ու եզերքները, դեպի սկզբնականն ու պապենականը, դեպի մաքուրն ու բնականը, սրա մեջ է հեղինակը տեսնում ազգի հետագա գոյության հաստատուն կովանք։

Հրանդի մանկության վերհուշերը լայն հնարավորություն են տալիս ժողովրդական կյանքի գեղեցկության նրբություններին, նրա ավանդույթներին, ազգային նահապետական մի շարք սովորություններին ծանոթանալուց բացի՝ շփվելու անցյալ դարի 60—70-ական թվականների արևմտահայ գավառի պատանեկության կենցաղի, հոգեբանության ու մտածողության որոշ առանձնահատկություններին¹⁰։ Դրանով շարքը ձեռք է բերում ճանաչողական նշանակություն։

Հրանդը գտնում է ինքնատիպ միջոց՝ սեղմ սողերում հուզական բուռն թափով վերարտադրելու համար ձևկության անկրկնելի քաղցրությունը։ Ոչինչ չի կարող փոխարինել մանկության օրերի գեղեցկությունը, ԾՅԹ անգամ այդ մանկությունը լինում է ոչնչով աչքի չընկնող, սովորական, միևնույն է, այն մնում է որպես անմոռանալի հուշ և երջանիկ պահ մարդկային կյանքում։

Պատմվածաշարի լեզուն պարզ է ու անմիջական։ Այնտեղ մենք տեսնում ենք զվարթ, պատանեկան անհոգությանը ներծծված ոճ և ինչ-որ տխուր շեշտ, որ անընդհատ հետևում է այդ ոճին։ Ոճի ու տրամադրության այդ երանգները հաճախ փոփոխվում են այնքան արագ, որ շես հասցնում հետևել դրանց հաջորդումներին։ Ոճական այս յուրահատկությունն ըստ երևույթին առաջանում է մի կողմից մանկության քաղցր հուշերի, մյուս կողմից առկա քաղաքական ճշդ իրականության հակադրումից։

Համիդյան ռեժիմի անմիջական ազդեցությունը Հրանդի ստեղծագործական աշխարհի վրա չէ միայն, որ ներգործում է։ Քաղաքական հողմերը, բռնությունն ու ճնշումը անբնական ընթացք են տալիս կյանքին և ազդում են գրական երևույթների վրա ամբողջությամբ վերջրած։

⁷ Հ. Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», հ. 5, էջ 193։

⁸ «Մասիս», Կ. Պուլիս, 1893, թիվ 3987, էջ 232։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Փր. Զոհրապուր, Լ. Բաշալյանը գրում են իրենց պատանեկան հուշերի մասին («Ուղեկրություն մը հիշատակներու մեջ», «Լուստա»), բայց դրանք կապվում են ավելի շատ պոլսական կյանքի ու պոլսեցի պատանիների կենցաղի ու հոգեբանության հետ։

1894—96 թթ. կազմակերպվում են հայկական շարժեր, որոնք դառնում են ընդհանուր գրական կյանքի քայքայման ու փլուզման պատճառ:

Այդ տարիներին տարագրություն ճամփաները Հրանդին երկու տարով նետում են Բուլղարիա: Այնտեղից վերադառնալուց անմիջապես հետո թուրքական կառավարությունը նրան դատապարտում է տասնամյա աքսորի: 1908 թ. Օսմանյան սահմանադրության ընձեռած հնարավորությամբ, երբ նա կրկին վերադառնում է Կ. Պոլիս, մշակութային կյանքի աշխուժացման պայմաններում կրկին մտնում է իր տարերքի մեջ և անմնացորդ նվիրումով նորից լծվում գրական ու մանկավարժական աշխատանքի: Նրա ստեղծագործությունները շուտով ի հայտ են գալիս տարբեր թերթերում ու հանդեսներում՝ «Սուրհանդակ», «Ոստան», «Հայ գրականություն» և այլն: «Ազատամարտ» օրաթերթում Հրանդը 1910 թվականից Ավո ստորագրությամբ սկսում է սպազբել «Կես-շինական նամականի» շարքը, որն ամենայն որոշակիությամբ բացահայտում է գրողի հասարակական, քաղաքական, գեղագիտական կողմնորոշումները, դրսևորում նրա գաղափարական համոզմանները: Հաջորդաբար լույս տեսնող գեղարվեստական այդ պատկերների ծավալային փոքր սահմաններում Հրանդը կենտրոնացնում է ժամանակի հարսուզան պատկերը՝ անդադառնալով դեպքերին ժողովրդական, ազգային հոգեբանության դիտանկյունից:

Շարքի կենտրոնական դեմքը՝ կյանքի փորձն ու փիլիսոփայությունը յուրացրած ծերունին, «Ազատամարտին» հասցեագրած նամակների միջոցով ուզում է իր խոհերը կիսել ընթերցող հանրության հետ: Համար առ համար լույս տեսնող այդ գեղեցիկ կտորները ընթերցողին առինքնում են ինքնատիպ բարբառով ու վերլուծություններով:

Պանդխտության, սոցիալական ճնշվածության թեմային գուգահեռ «Կես-շինական» նամակներում ի հայտ են գալիս նաև ազատության, ըմբոստության ու պայքարի տրամադրություններ: Դա պայմանավորվում է ժամանակի քաղաքական մթնոլորտում կատարվող փոփոխություններով: Մեկ տարի էլ չի անցնում օսմանյան սահմանադրության հուլիսյան կոտորածների լուրը ցնցում է հայ ժողովրդին: Երիտթուրքական կառավարության կազմակերպած այդ ահավոր սպանդի հետևանքով զոհվում են մոտ 30000 հայեր, 10000 մանուկներ որբանում են: Մամուլը լցվում է շարդի սարսուղեցիկ տեսարանների նկարագրություններով: Աղանայի կոտորածին անդրադառնում են արևմտահայ մի շարք գրողներ: Մեռնող են առնում Ջապել Եսայանի «Ավերակներուն մեջ»-ը, Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամես» բանաստեղծաշարը, Դ. Վարուժանի «Ծեղին սիրտը» ժողովածուն:

Կիլիկյան կոտորածները ծանր ազդեցություն են թողնում նաև Հրանդի վրա: Նրան նախ մտահոգում է բազմահազար որբերի ճակատագիրը: Նա լինում է տարբեր որբանոցներում, հուսադրում է դժբախտ երեխաներին, անմիջական մասնակցություն է ունենում նրանց որդեգրելու հարցում: Թերթերում լույս են տեսնում նրա բազմաթիվ հոդվածներն ու որբերի մասին սրտատուչ ակնարկները: Իրատեսորեն հետևելով դեպքերի ընթացքին՝ Հրանդը կանխազգույն է, որ կիլիկյան ջարդերը հայ ժողովրդի դեմ գործադրվող վերջին բռնությունները չեն, ուստի նա վճռականորեն գնդեր է կոչում իր հայրենակիցներին:

Ավոն Հրանդի նախասիրած հայ շինականի կերպարն է: Այն իր մեջ խտացնում է հայ գյուղացու լավագույն գծերը՝ ուղաձուլությունը, խոհմեծությունը, երևույթները ճիշտ գնահատելու կարողությունը, հայրենասիրությունը, հերոսական ոգին, հարևան ժողովուրդների հանդեպ բարեկամեցողությունը:

Շինական Ավոն ժողովրդի հետ միաբան լինելու պահանջ է դնում հոգևորականության առջև: Նա հպարտությամբ է հիշում տեր Թորոսի օրինակը, որի ամենօրյա աղոթքը ժամից ու ժամագրքից հետո հետևյալն է. «Տե՛ր, տե՛ր սրտիս, խնջալը կշտիս, ուժը՝ թևիս անպակաս անիս»¹¹: Այս քահանայի գործելակերպում գլխավորը ինքնօգնության գաղափարն է: Նրա գործունեության ծրագրում առաջնայինը մնում է միշտ սեփական ուժերով պայքարելու եղանակը:

«Կես-շինական» նամակաշարում հեղինակը տուչվում է «պանդխտ հողերը» վերամիավորած միասնական Հայաստանը տեսնելու փափագով: Թուրքական պետության կողմից հավետ հալածված ամենասարսափելի գաղափարն է սա, որ սահմանադրության ընձեռած կարճատև հնարավորության մաջոցով Հրանդը շտապում է երևան հանել ի տես համան հայության ու աշխարհի: Իրականությունը որքան էլ ծանր ու դժան լինի, գրողը պետք է պայքարի համակերպության գիտակցության դեմ և հասարակությանը մղի պայքարի ու գործունեության: Այսօր արդեն, երբ տանյակ անգույներ սպացուցվել է, որ պատմությունը չի սիրում թուլլերին, «Կես-շինական նամակների» շարքը հնչում է նույնքան արդիական, որքան թուրքական մղձավանջի տարիներին:

Այսպիսով, «Կես-շինական» նամակաշարում դրսևորվում է ժամանակաշրջանի առանցքային պրոբլեմների ընկալման նոր անդրադարձը՝ իրրե գաղափարական առաջադրույթ և գործնական ծրագիր: Պանդխտությունը դատապարտող, ազգային միասնության, անկախության,

¹¹ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, 2 հոկտեմբերի:

բռնատիրութիւնից ազատագրվելու, հայրենասիրութեան գաղափարները այս շարքում ստանում են արդիական հնչողութիւն՝ պայմանավորված ժամանակի հասարակական-քաղաքական բարդ իրավիճակի առանձնահատկութիւններով:

Հրանդը նամակաները կառուցում է անբռնազրոս, անմիջական ոճով, իրեն հատուկ ջերմութեամբ: Ճիշտ է, երբեմն Ավոյի՝ որպէս շինականի բերանից ասվող խոսքերը հնչում են անհամոզիչ, բայց դրանք այնպես են միախառնվում և ձուլվում հյուսվածքին, որ չեն խաթարում ընթերցողին կաշառող անմիջական տրամադրուիչութիւնը: Գեղարվեստական ուշագրավ եղանակներով արծարծված առաջավոր գաղափարների, ազատասիրական ոգու միջոցով «Կես-շինական նամականին» Հրանդի գրական ժառանգութեան մի ուշագրավ ու արժեքավոր մասն է:

1903—14 թթ. ազգային թեմաների կողքին Մելքոն Կյուրճեանին շարունակում է հետաքրքրել սոցիալական թշնամութեան պրոբլեմը: Նրա ստեղծագործութիւններում իրական գույններով ցույց են տրվում մարդու թշնամ ու անօգնական վիճակը, գաղթականութեան ցավերը, ուսանողութեան հոգսերը («Մահվան ութօրեք», «Առանց փրկոնի քահանան», «Խանին վերին հարկը» և այլն): Հեղինակը մշտապես հետաքրքրվում է աղքատների ճակատագրով, մտահոգվում է նրանց՝ կարիքի դեմ անգոր ու անօգնական, ուժեղի կողմից միշտ արհա՛արհճված լինելու համար:

Հետասամանագրական տարիներին Հրանդի ստեղծագործութիւններում մեծ տեղ են գրավում նաև այլազգիների կյանքից վերցված պատմութիւնները («Կըլկիակը որ չի ծխար», «Արյունոտ թերթը», «Չորս անիվների վրա»): Գրողը չի կարողանում անտարբեր անցնել նաև հալածված ու թշնամ օտարների կողքից ու նրանց վիշտը դարձյալ ապրում է սեփականի զգացողութեամբ:

Կյանքի վերջին շրջանում, հավանաբար Բաֆֆու ազդեցութեամբ, Հրանդը ձեռնամուխ է լինում ծրագրային քաղաքական գործերի ստեղծմանը: Դրանցից արժանահիշատակ է հատկապես հեղինակի մահվանից մեկ տարի առաջ գրված Վարուժանի և Միրոնու «Նամակառոյ» հանդեսում տպագրված «Բարի ճանապարհ» ընդարձակ պատմվածքը: Այս ստեղծագործութիւնը հիրավի կարելի է դիտել որպէս հեղինակի ամբողջ կյանքի փորձով ամրապնդված հայացքների ու տեսակետների հիմնասյուն: Այստեղ արտացոլվում են հատկապես նրա երկու հիմնական ձգտումները: Նախ՝ բուլղար գյուղացու՝ Մարգոֆի միջոցով նա հավաստում է իր սերը հողի մշակի հանդեպ: Միանգամայն պարզ է նաև պատմվածքի նպատակագրումը. բուլղարացի մարտնչող հայրենասերների ոգին պետք է օրինակ լինի հայերի համար: Հրանդը պատմվածքում ներկայացնում է գյուղացու նոր որակ: Մարգոֆը մարմնացնում է անցյալ դարավերջին ու մեր դարակազմին «հայրենիքի ցավերուն ուխտագիր» հայ հաղուկի տիպը: Մ. Կյուրճեանը, այսպիսով, հայրենիքի ազատագրութեան հույսերը կապում է մարտնչող հայ գյուղացու (ֆիդայիների) հետ: Նա համոզված է, որ հայ ժողովրդի փրկութիւնը կապվում է հողի աշխատավորի հետ և միայն «գյուղին կարող է զարգանալ»:

«Բարի ճանապարհ» պատմվածքի, որպէս արվեստի կառույցի մասին խոսելիս, սակայն, պետք է ասել, որ կյանքը նվաճելու իր ուժերը մի անգամ ապացուցած հեղինակը վրիպում է, երբ փորձում է այդ ուժերն ընդարձակել իր ընդունակութիւններից ավելի հեռու և ներկայացնել կյանքի այնպիսի քնազավառներ, հոգեբանական խաղեր ու դրամաներ, որոնց հետ իր ծանոթութիւնը հատվածական է ու անբավարար: Հրանդը սխալվում է, երբ դուրս է գալիս իրեն քաջածանոթ հայ միջավայրից և կարճատև տպավորութիւնների վրա հիմնվելով՝ օտար բարքեր ու քնավորութիւններ է պատկերում:

Վրիպակի հավակնութիւն ունեցող ընդարձակ այս պատմվածքում բավական թույլ ու անհամոզիչ է սյուժեի զարգացումը: Կերպարները սխեմատիկ են և կարծես հեղինակի խոսափողի դեր են կատարում: Գաղափարն արտահայտվում է մերկապարանոց: Բացակայում են համապատասխան մթնոլորտն ու կոլորիտը: Երևակայութեան թոփոք կարծես կյանքն անջատում է իրական հողից և ստիպում է, որ ընթերցողը թերահավատորեն վերաբերվի նկարագրվող գործողութիւնների ճշմարտացիութեանը:

Տուժում են նաև պատմվածքի ոճը և լեզուն: Խոսքը որոշ հատվածներում երկարում է ծամծմվում: Հեղինակին հոգեհարազատ միջավայրից եկող հորդահոս լեզուն դառնում է անգույն: Ծավալուն ստեղծագործութիւններում աշխատելով մնալ ժանրի սահմաններում՝ Հրանդը փաստորեն ավելի է խախտում դրանք: Մետոնոն են առնում թույլ երկեր: Ընդարձակ այդ ստեղծագործութիւններով հեղինակի գրական ժառանգութիւնը գեղարվեստական որակի հարցում մեծ բան չի շահում:

Ամփոփելով Հրանդի պատմվածքների մասին մեր խոսքը՝ նշենք, որ նրա տարերքն այնուամենայնիվ քրոնիկն է ու քրոնիկին մոտեցող փոքրածավալ պատմվածքները: Ինչպէս «Պանդուխտի կյանքն» շարքում, այնպես էլ «Մանկութեան հիշատակներում», աշխատավոր մարդկանց կյանքից վերցված պատկերներում, «Կես-շինական նամականիում» Հրանդը երևում է ինքնատիպ արվեստով և տաղանդով: Մինչդեռ ընդարձակ պատմվածքներում նա չի կարո-

դանում մեալ անհրաժեշտ բարձրության վրա: Այս վերջիններում մատուցվող նյութը ներկայացվում է մերկապարանոց՝ առանց անհրաժեշտ գեղարվեստական ձևավորում ստանալու: Այդ պատմվածքները պարզապես արժեքավոր են իրենց արտահայտած մի շարք դրական գաղափարների շնորհիվ: Ազգային ու անձնական իրավունքների համար մարտնչող անհատներով, օրինակելի կանանցով ուժեղ, միասնական հասարակության մասին հեղինակի երազներն այսօր էլ են հուզում մեզ և մտածելու տեղիք տալիս:

А. М. ЧИЛИНГАРЯН. — Отражение действительности в рассказах Мелкона Кюрчяна. — Западноармянский писатель А. М. Кюрчян (Гранд) выступил в периодических изданиях конца XIX—начала XX вв. с циклами рассказов: «Уличные сборища», «Среди покорных низов», «О горестях скитальцев», «У своей печи», «Воспоминания детства». Эти реалистические зарисовки быта и забот простого люда написаны талантливо, в оригинальной манере, в отличие от больших произведений того же автора.